ՀՀ Ոստիկանապետ
ոստիկանության գեներալ-գնդապետ՝Վ. Գասպարյանին

՝՝Վելես՝՝ Իրավապաշտպան ՀԿ նախագահ՝Մ.Պողոսյանից
Հասցե՝ք. Երևան, Չարենցի 4, բն.121
Հեռ. /091/ 40-35-13

Հաղորդում հանցագործության մասին

11.09.2015թ. ՀՀ ոստիկանության պետի 1-ին տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան իմ՝ Մարինա Պողոսյանի վերաբերյալ ՝՝Ներքին դիտում՝՝ օպերատիվ- հետախուզական միջոցառում անցկացնելու վերաբերյալ թույլատվություն ստանալու համար այն հիմքով, որ

Ձեռնարկված <<Օպերատիվ հարցում>> և <<Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում>> ՕՀ միջոցառումների արդյունքում ոստ. Արաբկիրի բաժնում տեղեկություններ են ստացվել, այն մասին, որ նշված հանցագործությունը կատարել է Մարինա Հրանտի Պողոսյանի /ծնվ.13.06.1962թ բն.՝ք.Երևան, Դեմիրճյան փող. 12/14շ. 36բն; Այսինքն՝ Մարինա Հրանտի Պողոսյանը կասկածվում է ՀՀ քր. օր.-ի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատանիշներով նախատեսված արարք կատարելու մեջ, որը դասվում է ծանր հանցագործությունների շարքին;

(մեջբերում 11.09.2015թ.միջնորդությունից)

1. ՀՀ ոստիկանապետի 1-ին տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանի կողմից կատարված միջնորդությամբ խախտվել է իմ անմեղության կանխավարկածի սահմանադրական բացարձակ իրավունքը և իմ վերաբերյալ ցուցաբերվել է ակնհայտ կանխակալ, կամայական մոտեցում: Հանցագործության կատարման փաստը կարող է հաստատված համարվել միմիայն դատարանի կողմից և ոչ ՀՀ ոստիկանապետի 1-ին տեղակալի կողմից, ինչպես փաստված է 11.09.2015թ. միջնորդության մեջ, որը և հանդիսացել է հետագա ապօրինությունների և իմ անձի նկատմամբ ոտնձգությունների հիմք: ՀՀ ոստիկանապետի տեղակալի կողմից միջնորդության մեջ նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, սուտ են: Միջնորդության ներկայացման պահին՝ 11.09.2015թ., ես նույնիսկ հարցաքննված չեմ եղել քրեական գործի շրջանակներում, ավելին առաջին անգամ՝ այն էլ որպես վկա հարցաքննվել եմ ՀՀ ոստիկանապետի տեղակալի միջնորդությունից միայն 3 օր հետո՝ 14.09.2015թ.:Փաստացի՝ 11.09.2015թ. միջնորդությամբ ակնհայտ կեղծ տվյալներ են հայտնվել դատարանին, ակնհայտ անմեղ անձին պիտակավորելով ՝՝հանցագործություն կատարած անձ՝՝:

2. ՀՀ ոստիկանապետի տեղակալի 11.09.2015թ. միջնորդությամբ կոպտորեն խախտվել է՝ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին՝՝ ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետը, որի համաձայն՝ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, (...) կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է իրականացնել միայն այն դեպքում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ: Իսկ ես տվյալ պահին ոչ միայն դեռ ես հարցաքննված չեմ եղել, այլև նույնիսկ ապօրինի ՝՝Ներքին դիտում՝՝

ՕՀՄ անցկացնելուց մեկ ամիս հետո քրեական գործի կարճման պահին 17.10.2015թ. ևս ունեցել եմ վկայի կարգավիճակ:

Այն, որ 11.09.2015թ. միջնորդությունում նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, այլ խեղաթյուրվել են նպատակ հետապնդելով ամեն գնով ստեղծել արհեստական հիմքեր ինձ հետևելու, մուտք գործելու իմ անձնական տարածք, իրազեկվելու իմ շարժից, իմ բնակարանում տեղի ունեցող անձնական խոսակցություններից, փաստվում է հետևյալով ևս՝

2016թ. օգոստոսի 17-ին իմ կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է կատարվել ՀՀ ոստիկանություն, արդյոք իմ վերաբերյալ 2014թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. օգոստոսի 17-ը կատարվել է որևէ ՕՀՄ: 26.08.2016թ. ՀՀ ոստիկանությունից ստացվել է պատասխան, որ 2014թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. օգոստոսի 26-ը իմ նկատմամբ ՛՛Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին՛՛ ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ- հետախուզական միջոցառումներ չեն անցկացվել:

Հարգելի Ոստիկանապետ

Վերը նշված փաստարկները ապացուցում են, որ 11.09.2015թ. միջնորդությունը իր մեջ պարունակում է կեղծ տվյալներ, որոնք ներկայացվել են դատարան, մասնավորապես դա վերաբերվում է ՛՛Օպերատիվ հարցում՛՛ և ՛՛ Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում՛՛ միջոցառումներին իբրև որոնց անցկացման արդյունքում ՀՀ ոստիկանապետի 1-ին տեղակալ Հ. Պողոսյանը հաստատված էր համարել, որ ես կատարել եմ ծանր հանցագործություն: Միևնույն ժամանակ 26.08.2017թ. ՀՀ ոստիկանության կողմից ստացված գրությամբ պարզվում է, որ օրենքի խախտմամբ կատարված ՛՛Ներքին դիտում՛՛ ՕՀՄ ևս չի անցկացվել ՀՀ ոստիկանության կողմից:

Գտնում եմ, որ իմ անձի վերաբերյալ կատարվել է հանցագործություն՝ 11.09.2015թ. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին կեղծ, իրականությանը չհամապատասխանող տվյալներ տրամադրելով, ստացվել է իմ նկատմամբ ՛՛Ներքին դիտում՛՛ ՕՀՄ անցկացնելու թույլտվություն, ինչպես նաև այն անցկացվել է օրենքի կոպիտ խախտմամբ և չպարզված անձանց՝ ոչ ՀՀ ոստիկանության աշխատակիցների միջոցով:

Խնդրում եմ պարզել մեղավորներին և պատժել, նամանավանդ, որ վստահաբար նման կոպիտ խախտումներ թույլ են տրվել իմ մասնագիտական գործունեությունը խաթարելու նպատակով:

Կից ներկայացնում եմ

1. Անձնագրիս պատճեն,
2. 11.09.2015թ. որոշման պատճեն,
3. 17.08.2016թ. ՀՀ ոստիկանությանը ուղղված տեղեկատվություն ստանալու հարցման պատճեն,
4. 26.08.2016թ. ՀՀ ոստիկանության պատասխան պատճեն

Հարգանքներով

՛՛Վելես՛՛ Իրավապաշտպան ՀԿ նախագահ՝ Մ.Պողոսյան

03.11.2017թ.